№ 114 Յունիսի 26 Հաբաթ 1882 Յունիսի 26 Հաբաթ № 114

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինտելիգէնցիայի դերը։ — ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Ալէքսանդրապօլից։ Նամակ Ախալքալաքից։ Նեղքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Եգիպտական հարց։ Նամակ Աստրիայից։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ՖԵԼԻԵՏՕՆ։

ԻՆՏԵԼԻԳԷՆՑԻԱՅԻ ԴԵՐԸ

Մենք միշտ կրկնել ենք այն միտքը, որ մեր ամբոխի զաւակները, որոնք լուսաւորվում են, բաձրագոյն ուսում են ստանում, այլ ևս չեն կամենում վերադառնալ իրանց հայրենի գիւղը, գործել իրանց համագիւղացիների մէջ, բայց միշտ աշխատում են մնալ մեծ կենտրոններում, մեծ քաղաքներում։ Գիւղացու որդին դառնում է քաղաքի մէջ բժիշկ, փաստաբան, նոտարիուս, բանկի դիրեկտոր, պետական ծառայող, զինուորական։ Այդպիսով ամբոխը իր զաւակներին ուսում է տալիս, բայց իր տուած այդ ուսումից՝ ինքն ոչինչ օգուտ չունի։ Ուսում արածները այլ ևս իրանց ընտանի շրջանը չեն վերադառնում և ամբոխը մնում է առանց մտաւոր առաջնորդների։

Բայց, ինչ և իցէ, կան մեր ամբոխի մէջ, թէև փոքր թիւով, ինտելիգէնցիայի ներկայացուցիչներ, որոնց պարտաւորութիւնը կը լինէր առաջնորդել ազգա ամբոխը նրա ամենօրեայ կարիքների, նրա կենսական ամենահարկաւոր պահանջների ու խնդիրների մէջ։

Դժուար է ամեն բան բացատրել մամուլի մէջ, բացի սորանից լրագիրը ամբոխի մեծամասնութիւնը չէ կարդում։ Լինում են յանկարծակի, ստիպողական պահանջներ, երբ ամբոխը անմիջապէս պէտք է դիմի իր շրջանի մէջ ներկայ գտնվող մտաւորապէս աւելի զարգացած մարդուն, նրանից խորհուրդ հարցնելու համար։ Այդ տեսակ ինտելիգէնցիային պատկանողներ ամեն տեղ կան մեր ժողովրդի մէջ։ Թէև բարձրագոյն ուսում ստացածների մեծամասնութիւնը բնակվում է քաղաքներում, բայց այնու ամենայնիւ գտնվում են և գաւառներում բարձրագոյն ուսում ստացած, համալսարանական մարդիկ. ամեն տեղ կը գտնվի գոնէ մի բժիշկ, մի փաստաբան, մի ստորին պաշտօնեայ, վերջապէս մի թեմական տեսուչ, մի ուսուցիչ որոնց դիմելով ամբոխը կարող է խորհուրդ առնել իր անելի այս կամ այն նշանաւոր քայլի վրա։

Կամ մեր ամբոխը խորհուրդ առնելու համար ոչ ոքին չէ դիմում, կամ մեր ողորմելի ինտելիգէնցիային պատկանող անհատներ, որոնք ապրում են ժողովրդի շրջանում, կատարելապէս անտարբեր են դէպի ժողովրդի կարիքները, իրանց նեղութիւն չեն տալիս ուղղութիւն տալ առաջնորդել ժողովուրդը, խելացի խորհուրդներ տալ նրան։

Վեր առնենք մի օրինակ։ Երևանի նահանգի մի հայ գիւղի տասն և հինգ ընտանիքների գլուխը յանկարծ, մարդ չը գիտէ թէ ո՞ր խաչից, միտք է մտնում գաղթել Ղրիմ և Մալորոսիա։ Ի՞նչի, ի՞նչ նպատակով, ինչ շարժառիթներից դրդված,—ոչ ոք չը գիտէ և չէ էլ կարող բացատրել։ Ո՞վ է մացրել այդ տեսակ միտք գիւղացիների գլուխը, նոյնպէս ոչ ոքին յայտնի չէ։ Ինքն գիւղացին ո՞ւրտեղից կը մտածէր Ղրիմի կամ Մալորոսիայի վրա, որոնց անունն անգամ նա երբէք լսած չէ... Եւ ահա գիւղացին տալիս է խնդիրք գաղթելու։

Այդ ժամանակ ի՞նչ է անում այն ինտելիգէնցիան որ ապրում է նոյն իսկ ամբոխի մէջ. նրանց մէջ կը գտնվի փոքր ի շատ ուսում առած, աշխարհը տեսած երիտասարդ վաճառական, Ներսիսեան դպրոցում ուսում աւարտած քահանայ, կը գըտնվի գաւառական բժիշկ, կը գտնվի փաստաբան, որ դիցուք էջմիածնի վանքի օգուտները պաշտպանելով, պտտում է գիւղերում։ Մի՞թէ այդ բոլոր մարդկանց մէջ չը կայ գոնէ մէկը, որի, եթէ ոչ ազգայրական, գոնէ մարդկային զգացմունքը մեռած չէ, որ դիմէր գիւղացիներին և համոզէր նրանց այդ քայլը չանելու, բացատրելով նրանց այդ տեսակ գաղթականութեան բոլոր վնասները, քանի որ մեզ յայտնի է թէ հայերի բոլոր մեծ գաղթականութիւնները կովկասեան սարերի այն կողմը, չը դիմանալով կլիմային և հասարակական կեանքի եղանակին, կտրվելով մայրենի հողից, հետզհետէ անհետացան, կամ գոնէ այլասերվեցան։

Ի հարկէ ամեն բանի վրա կրօնական տեսակէտից նայողները կասեն թէ հայոց մեծ կօլօնիաները անհետացան այն պատճառով որ կրօնը փոխեցին։ Շատ լաւ. այդ պատահեց Լեհաստանի հայերի հետ, որոնք կաթոլիկութիւնն ընդունեցին. բայց Ղզլարի, Մոզդոկի, Ղրիմի կամ Աստրախանի հայոց մեծ գաղթականութիւնները խ՛օ կրօնափոխ չեղան, լուսաւորչական մնացին։ Բայց դարձեալ նրանք փոքր առ փոքր նուազում, այլասերվում, անհետանում, կորչում են, չը դիմանալով ոչ կլիմային, ոչ էլ հասարակական պայմաններին։

Ո՞ւր է Ղրիմի և Բեսարաբիայի ահագին հայոց գաղթականութիւնը,—նա կարող է այժմ կատարելապէս անհետացած համարվել։ Ի՞նչ դրութեան մէջ են Ղզլար, Մոզդոկ և Աստրախան,—նրանց հայ ազգաբնակութիւնը հետզհետէ կորչելու վրա է, նրանք հայ բնակիչներից դատարկվելու վրա են։

ՖԵԼԻԵՏՕՆ

Հայը ջրից վախենում է։ Դիոգէնեսի լապտերովն անգամ անկարելի է ընդհանուր տիեզերի վրայ մի հայ նաւապետ գտնել։ Հայը ցամաքի խենթ է, հաստատուն հողն է սիրում, ծովից փախչում է, մինչդեռ ծովն է մարդս արիացնողը, փոթորիկն է մարդուս սիրտը ամրացնողը, յուզեալ և յանդուգն ալիքն է մարդուս համարձակութիւն տուողը, չարաթներ, ամիսներ միայն ջուր և երկինք տեսնելով և ազատ օդ շնչելով կարելի է ազատ մտքերի տէր լինել, միով բանիւ լայնատարած ջուրը, ծովու կեանքը, ցամաքէն բոլորովին տարբեր զարգացում կը տան մարդուս, և գաղափարները ծովուն տարածութեան չափ ընդլայնելու կը նպաստեն։

Մեր պատմութիւնը որքան չոր ու ցամաք լինի, դարձեալ վկայում է, որ մեր նախնիքը ունեցել են մի ծովեզերեայ Հայաստան։ Բացի ծովային պատերազմներից, (զորս հռչակաւոր ռուս նկարիչ պ. Յովհաննէս Այվազովսկին ո՞ գիտէ, ինչ պատճառաւ չէ յիշած) ունեցել են նաև վաճառական մեծամեծ նաւահանգիստներ։

Իսկ այժմ հայը ոչ թէ նաւապետ, այլ մի հասարակ նաւաստի չունենալուց զատ, (ի բաց առեալ Կ. Պոլսոյ խայրխճիները) մեր արդի վաճառականները այնքան փոթորիկից վախում են, որ մեծ գումարներ չահելու առիթ էլ ունենան, ձմեռ ժամանակ երբէք ճանապարհորդութիւն չեն ուզում անել, սսում են վախում ենք խեղդվենք, և ամառը ճանապարհորդում են ալեաց ամենաթեթև ծփանքներից ըստ մեծի մասին հիւանդանալով։ Պոլսոյ ծանօթ հայ վաճառականներից մի անձ ունի առագաստաւոր նաւեր, որոնք հայ թագաւորների անուններով մկրտած են, իսկ նաւապետը և նաւաստիք օտարազգի են։ Նորերումս կարդացինք նաև Թիֆլիզեցի անուանի մի հայ վաճառական Լոնդոնում նաւ է շինել տուել Կասպից ծովու մէջ նաւարկել տալու համար. սոքա նախանձելի սկզբնաւորութիւններ են, բայց, միայն նաւ ունենալով գործը չը վերջանար, նաւապետ և նաւաստի պատրաստելու է, ջրի վրայ մարդ դալ սովորեցնելու է։

Վանայ ծովու մէջն էլ ընկերութեամբ շոգենաւ բանեցնելու մի ձեռնարկ կար, ձայնը չէ լսվում, ինչ եղաւ. շոգենաւները ընկղմեցան, թէ Վանայ ծովը սառեցաւ, ինչ պատահեցաւ, ոչինչ լուր չը կայ. գոնէ դա լճից սկսէինք, յետոյ անհուն ծովերը կը գնայինք։

Ջուրը մեծ բան է, բաղմակողմանի դասատու է։

Ականջը խօսի Գամառ Քաթիպային, նրա ասածին նման եթէ «ոյժս ինձ հետ դար կտրիճ դառնայի» կը գնայի Եւրոպայի նաւարկութեանց ուսումնարաններից մէկին մէջ ուսանող կը լինէի, բայց ափսոս, անկարելի է, որ ալեոր հերքերս սենան այսուհետև։ Թող կտրիճ հայը հետեի այդ բանին։ Վերջապէս, որքան ցամաքի վրայ մարդ եկանք բաւական է, բոլոր ոսկորներնիս, մսերնիս չորացան, այժմ ջրի մէջ մնաց մեր յոյսը, ջուր, ջուր, ջուր, ուրիշ ոչինչ։

Նախախնամութիւնն էլ այնտեղ է. չՔ հաւատում, կարդացէք սաղմոսը «Զայն Տեառն ի վերայ ջուրց բազմաց։»

* * *

Անգղիական մի ընկերութիւն ծովու վրայ գնացող վաճառականական մի աշխարհանդէս բանալու նպատակ ունէր, այժմ այս նպատակը իրագործվեցաւ։ Ընկերութիւնը 3,000 տոնելադի չափով և Վիս-Ռուա անունով մի ահագին շոգենաւ պատրաստեց և դրաւ մէջը անգղիական զանազան ապրանքներ։ Շոգենաւը աշխարհիս ջուրը պիտի ման գայ, և այլ և այլ քաղաքների դլխաւոր նաւահանգիստներում պիտի կանգնի։ Այս ամենանոր ձեռնարկութեան նպատակն է, Լոնդոնի Բիրմինկամի, Մանչեստերի և ուրիշ մեծ կենդրոնատեղիների ձեռակերտները ծախել բոլոր աշխարհին և այսպիսով վաճառականներին մինչև Անգղիա ճանապարհորդելու դժուարութիւնից ազատել։ Այս տարօրինակ շոգեշարժ և ջրընթաց վաճառական—նաւին բոլոր յարկերը և սենեակները աշխարհանդիսի սրահների փոխուած են։ Թիպրալտարից Միջերկրական ծով պիտի գնայ, անկից Սուէզի ջրանցքը, Սէյլան, Հնդկաստան, Աստրալիա, Ֆիճի, Գլուխ Բարեյուսոյ, Մադէր և այլն։

Ցոյս կայ որ միջազգային աշխարհանդիսի մը չափ յաջողութիւն պիտի ունենայ այս նորատեսիլ հրէշ վաճառականը։ Ծովից վախենող վաճառականներին աչքը լոյս։

* * *

Գնացի անցեալ օր Վիէննայի Ագուստիներ եկեղեցին։ Այս եկեղեցին Վիէննայում երկրորդական եկեղեցիների կարգին է պատկանում և չէնքը հին է։

Ամենայն պարագայիւք և հանդամանօք Աստուծոյ տուն կոչուելու արժանի մի տաճար։

Ժողովրդի յատկացեալ բազկաթոռները ընկուզի փայտից չինուած և մինչև անգամ վրան զանազան պատկերներ քանդակուած են. ասենք, սոքա մեզ համար չորրորդական բաներ են։ Գանք եկեղեցւոյ նուրբ զարդերին, չքեղ վայելչութեանը. սրանք էլ մեզ համար երրորդական են։ Մինչև աղքատ գիւղացուն ի պատիւ տաճարին մաքուր հագուած եկեղեցի գալը, սա էլ մեզ համար երկրորդական է կարող ենք ասել։

Իսկ երգեցողութեան ինչ ասենք։ Դա ամէնքի, նամանաւանդ մեզ համար ամենագլխաւոր և առաջին պայման է։

Ի հարկէ Եւրոպա ապրող ազգայիններից շատերը գիտեն թէ ինչ ուզում եմ ասել։

Երգէնը, այն երկնային նուագը, ջութակների քնքոյշ հնչիւնները խառնվելով աղջկանց հրեշտակային երգեցողութեան հետ, թափանցում են մինչև սրտի խորերը, և այն տեղ իմաց են տալիս Աստուծոյ ներկայութիւնը։

Այս ձայները անկասկած ամեն տեղից լսվում են երկնային տելեֆոնների նման, նախ Աստուած լսում է, յետոյ լսում է Սերովբէից Քերովբէից կոչուած գերազոյն հրեշտակաց դասը, չը կայ մի անմահ արարած որ չը լսէ այդ երկնավայել ներաշնակութիւնը։ Լսում են նաև եկեղեցում հաւաքուած մահկանացուները, սոքա ևս վերանում են, և զգում են որ դերբնական մի տեղ են զտվում։

Պատճառը ինչ է, պատճառը երաժշտական դեղարուեստն է։ Աստուած օրհնելու, փառաբանելու և նմա աղօթելու մէջ անգամ դեղարուեստ է հարկաւոր։ Զորօրինակ մնգանում «Օրհնեա տէր» կամ «Տէր ողորմեա» պէտք է երգել, բաւական չէ միայն բոլոր ոյժով բարձրաձայն աղաղակել, դրանով ոչ Տէրը կօրհնուի, և ոչ ինքն էլ կողորմի, այլ երկնապարգև քաղցր ձայն ունեցողները մշակելով երգիչ և երգչուհիներ պատրաստել, և սրանց էլ նուագարաններ աւելացնելով կարելի է ժողովրդի սիրտը և հոգին շարժել, զգալի անել, յուզել և յերկինս բարձրացնել։ Այդ թէ ոչ, ականջներ խլացնելու չափ պօռալը և անհերդաշնակ ճիչեր արձակելը, մարդուս երևակայութիւնը խանդարել է և Աստուած մոռացնել տալէ զատ ուրիշ բանի չեն ծառայեր։

Մեր հինաւուրց Հայաստանեայց եկեղեցւոյ փառքը աւելացնելու պարտքը հոգևորական դասին կը պատկանի, իրանց փառքն էլ կաւելանայ, եթէ մեր եկեղեցիների մէջ երգուած անախորժ մըկմըկոցներին և ճանճիր կըմկըմոցներին մի դարման անենք, որով ժողովրդի սրտին մէջ եկեղեցի գնալու փափաքը կը կենդանացնեն։

* * *

Վիէննան պարծենում է վիրաբոյժների թագաւոր, հռչակաւոր պրոֆէսոր Բիլրոտին տէր լինելով. արդարև քիչ պարծանք չէ այդպիսի մարդու մը տիրանալը։

Ոչ թէ միայն լբժշկականութեան համար կատարելագործեալ ուսումնարաններ չունեցող երկրորդական քաղաքներից, այլ Անգղիայի, Իտալիայի, Ամերիկայի նման բժշկական փառաւոր համալսարաններ ունեցող երկիրներից անգամ ուսանողներ Վիէննա գալիս են, յատկապէս պրոֆէսոր Բիլրոտի դասախօսութիւնները լսելու և նորա հրաշագործ անդամահատութեանց ականատես լինելու համար։

Պրոֆէսոր Բիլրոտը գերմանացի է. վերջերումս Բերլինից ջերմ խնդրանք հրաւիրել էին իրան, որ

Ի՞նչ դառաւ Նոր-Նախիջևան,—նա Բօստօվ քաղաքի մի թաղ է դարձել միայն, աւելի ոչինչ։

Եւ այդ բոլոր հայ կոլօնիաները հետզհետէ կորցնում են, իսկ ոմանք արդէն կատարելապէս կորցրել են իրանց մայրենի լեզուն էլ։

Մենք երբէք կրօնափոխութեան պաշտողներից չենք եղել, մենք միայն սէր, համբերողութիւն և միութիւն ենք քարոզել դէպի արդէն կրօնափոխ դարձած հայերը, նայելով հարցի վրա ազգային տեսակէտից, բայց այնու ամենայնիւ մենք աներկիւղ կասենք որ կրօնափոխ եղած հայը, որ մնում է իր հայրենիքում, Անդրիովկասի հայաբնակ նահանգներում, նա չի կորչի, իսկ լուսաւորչական հայը, որ դաղթում է իր ծննդավայր տեղից, այնու ամենայնիւ որպէս հայ կը կորչի։

Մի՞թէ ամբոխի մէջ ապրող մեր ինտելիգենցիայի մէջ այն աստիճան մեռած է ամեն մարդասիրական զգացմունք, որ նա այդ բոլոր մաքերը չէ կարող բացատրել տգէտ ու անտէր ամբոխին։

Այո՛, չէ կարող, որովհետև ժամանակ չունի այդ մեր ինտելիգենցիան....

Այդ ինտելիգենցիային պատկանողները ամբողջ օր զբաղված են իրանց անձնական գործերով, իսկ գիշերները թուղթ են խաղում։ Ո՞րտեղից այդ խեղճերը ժամանակ կունենան մտնել ժողովրդի մէջ և առաջնորդել նրան խելացի, օգտաւէտ և բարի խորհրդներով։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

—

Յունիսի 21-ին

Վերջին միջոցներում Ալէքսանդրապօլում պատահած միակ արժանայիշատակ անցքը կազմում է կովկասեան քաղաքական մասի կառավարչապետ իշխան Դօնդուկով-Կորսակովի գալուստը։ Սրանից արդէն մի, երկու շաբաթ առաջ յայտարարված էր քաղաքին բարձրաստիճան հիւրի գալստեան օրը։ Տեղական պօլիցիան ցոյց էր տալիս մի առանձին եռանդ գլխաւոր փողոցների հարթութեան և մաքրութեան վերաբերութեամբ։ Ոտի անձինքներից բաղկացած մանաժողովը պատրաստում էր մի խնդիր մեր հասարակական ամենակարևոր հիմնարկութեանց նկատմամբ, իշխանին մատուցանելու համար։ Գիւղացիք, մեր գաւառի հողազուրկ, ողորմելի գիւղացիք զբաղված էին բազմաթիւ աղերսագիրների պատրաստութեամբ։ Իշխանի գալստեան օրը նշանակված էր յունիսի 16-ը։ Հասաւ, ի վերջոյ, այդ օրը։ Կէսօրից յետոյ սկսեցին, հետզհետէ, փակել կրպակները։ Էնէֆական դրօշակները ծածանում էին երկու շալք քաղաքի մուտքի մօտ, ուր գալար կանանչներից և ծաղիկներից յօրինված էր մի կամար, որի տակից անցնելու էր իշխանը։ Ժողովրդեան խուռն բազմութիւնը հաւաքված այստեղ, ժամը 4-ից սկսեալ մինչև գիշերվայ ժամը 9½, սպասում էր անհամբերութեամբ նորա գալստեանը։ Պ. Խալաթեանցների տունը, ուր իջևանելու էր պ. կառավարչապետը իր սվիտայով, զարդարված էր իշխանավայել շքեղութեամբ։ Ցան գէմ հանդիման շինված էր մի վենդել, որի մէջ տեղ փայլում էին բարձրաստիճան հիւրի անուանական սկզբնատառերը։ Սպայների և աստիճանաւորների դասակարգը կազմ պատրաստ էր ընդունելու իշխանին։ Իսկ զինուորական նուագածուների խումբը և ազգային զուռնան երբեմն, երբեմն նուագելով, փարատում էին մասամբ համբերութեան ժամերի ձանձրոյթը։

Վերջապէս գիշերվայ 9½ ժամին խուռն բազմութեան «ուրա» աղաղակները յայտնեցին Ալէքսանդրապօլին կովկասեան կառավարչապետի գալուստը։ Կամարի մօտ իշխանը ցած եկաւ կառքից։ Քաղաքական դէպուտատ պ. Ց. Բարսամեանց մատուցանելով աղ ու հաց, Ալէքսանդրապօլի հասարակութեան կողմից շնորհաւորեց նորին պայծառափայլութեան գալուստը, և յոյս յայտնեց, որ Ալէքսանդրապօլը զուրկ չի մնայ իշխանի հայրական ուշադրութիւնից։ Նորին պայծառ. յայտնեց իր շնորհակալութիւնը քաղաքին այդպիսի ուրախագին ընդունելութեան համար։—«Ալէքսանդրապօլը ինձ լաւ ծանօթ է,—շարունակեց նա,—«իմ քանիցս անգամ այնտեղ գտնվելով»։ Բայց հէնց այս բոպէին խնդրատու գիւղացիները չորս կողմից հարիւրաւոր խնդիրներ մատուցանելով, ընդհատեցին նորին պայծառ. ասելիքը, որ բաւականին անախորժ տպաւորութիւն գործեց իշխանի վրա։ Գիւղացոց խնդրատվութեան վերաբերութեամբ իշխանի արտասանած խօսքերից, կարելի է դուրս բերել հետևեալ որոշ եզրակացութիւնը՝ որ Ղարսի նահանգում չը կան ազատ հողեր հողազուրկ գիւղացիներին տալու համար։ Այնու ամենայնիւ նրանց մնում է յուսալ, որ իրանց իրաւացի խնդիրը կը հանի բարձր. իշխանութեան ականջին և թերևս լսելի լինի։ Ընդունելով խնդիրները իշխանը նստեց կառք նորից և մտնելով քաղաք իջևանեց պ. Խ-եանցների տանը, ուր Երևանի պ. նահանգապետը պատրաստել էր իշխանի և իր սվիտայի համար արժանավայել ընթրիք։

Հետևեալ օրը առաւօտեան ժամը 9-ին իշխանը այցելեց քաղաքային դպրոցին, օրիորդաց պրոգիմնազիային, մտաւ հոգ. դպրոցը, հայոց և յունաց եկեղեցիները։ Ժողովրդեան խուռը բազմութիւնը հետևում էր նրան ամեն տեղ «ուրա» աղաղակելով։

Ժամը 1-ին կէսօրից յետոյ ներկայացան նորին պայծառ. քաղաքի ներկայացուցիչներից մի քանի յայտնի անձնաւորութիւններ, մատուցանելով մի խնդրագիր, որ պարունակում էր իր մէջ եօթը կարևոր հարցեր քաղաքի տնտեսական բարօրութեան վերաբերութեամբ։ Մասնաժողովի անդամները, պէտք է ասած, շատ գեղեցիկ ընտրութիւն էին արել քաղաքային բազմաթիւ պահանջների մէջ, դուրս բերելով նրանցից մեր հասարակական ամենակարևոր պէտքերը միայն և լաւ մշակելով այդ պէտքերի բոլոր եօթը կէտերը։ «Քաղաքային ինքնավարութեան» և «միջնակարգ դպրոցի» հարցերը բռնում էին մի առաջնակարգ և պատուաւոր տեղ այդ պէտքերի մէջ։

Ընդունելով խնդրագիրը իշխանը խոստացաւ երկու շաբաթվայ ընթացքում պատասխանել բոլոր եօթը կէտերին պարբերաբար։ Այս տեսակցութեան մէջ յիշատակութեան արժանի են նորին պայծառ. արտասանած այն խօսքերը, որով խոստանում էր՝ վաճառականութեան ծաղկմանը նպաստելու համար, բանալ ամենակարճ հաղորդակցութեան նոր ճանապարհներ, լուսաւորութիւնը ծաւալելու համար, բանալ նոր ուսումնարաններ, համեմատ ժամանակակից պահանջների, թէ քաղաքում և թէ քաղաքի շրջակայ գիւղերում, և այլ կարևոր կարգադրութիւնք մեր քաղաքի վերաբերութեամբ։

Մի և նոյն օրը ժամը 2-ին կէսօրից յետոյ իշխանը մեկնեցաւ մեր քաղաքից դէպի Ղարս։

Ցեղացի

ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

—

Յունիսի 18-ին

Վաղուց է որ մեր ուսումնարանների դրութեան մասին ոչինչ չեմ գրած «Մշակում»։

Անցեալ տարում տեղւոյս ուսումնարանի վարչութիւնը ուսուցչութեան հրաւիրեց տեղական մի քանի երիտասարդներին։ Հասարակութեան անդամներից շատերը կարծում էին թէ տեղական ուսուցիչները ոչինչ առաջադիմութիւն չեն կարող առաջացնել....։ Բայց ուսուցիչները լուռ էին և աշխատում, որպէս զի գործով ապացուցանէին հասարակութեան թէ նոքա սխալվում են։ Վերջապէս հարցաքննութիւնները վերջացան և թէ որքան յաջող անցան, այսքանը միայն կասեմ որ բոլորի բերանից այսպիսի խօսքեր էին լսվում, «սա անսպասելի էր, այսպիսի աջող հարցաքննութիւն մենք չէինք սպասում։»

Ցաւալին այն է, որ Նիւթական միջոցների սղութեան պատճառով, մեր ուսումնարանները փոխանակ իրանց գործունէութիւնը ընդարձակելու, ստիպված են սեղմել։

Ուսումնարանների շինութիւնը խարխուլ դրութեան է հասել,—բացի երկու դասատուններից, որոնք համեմատաբար նորաշէն են, այդ շինութեան մէջ պարապելը անկարելի է դառնում։

Հոգաբարձութիւնը կամենում էր այս տարի նորոգել այդ շինութիւնները, բայց չը կարողացաւ հարկաւոր գումարը հաւաքել։ Թէ որքան անյարմար են այդ դասատունները և առողջապահական կէտից, կարելի է դատել հետևեալից։

Երևակայեցէք մի ցած սենեակ, որի երկայնութիւնը հազիւ հինգ սաժէն է և լայնութիւնը 7 արշին և որը 3 հատ պատուհաններ ունի, իւրաքանչիւրի բարձրութիւնը 22-ական վերշոկ և այդ-

---

այնտեղ գնայ մշտական կերպով և անդ ուսուցանէ վիրաբուժական արուեստը, բայց Վիէննայի հասարակաց կրթութեան նախարարութիւնը աղաչեց Թախանձեց մեծանուն պրոֆէսորին, Բիլրոթը համաձայնեցաւ և պատուոյ խօսքը տուաւ Վիէննա մնալու։

Այս աւետիսը անմոռանալի ուրախութիւն պատճառեց թէ ուսանողաց և թէ հասարակութեան։

Դանակ գործածելու զարմանալի ճարպիկութիւն ունի և դորա համար մեծ համբաւ է ստացած Բիլրոթը։ Մարդկային մսերը ջարդելու, կտրելու, կտրատելու մասին ունեցած հանճարը հիանալի է։ Մարդու փոր ճեղքել, կուրծք բանալ, պատռել, ստամաքսը դուրս հանել, ստամաքսին վրայի վերքը կարել մաքրել յետոյ մէջը դնել, կարել, կարկատել, արիւն չունեցողին երակը բանալ և շատ ունեցողին երակիցը արիւն փոխադրելով, համարեա հիւանդին վերատին կեանք տալ, այլ և այլ տեղեր մսեր աւելացնել, աւելորդները խլել, հանել, սոքա Բիլրոթի համար այնքան հասարակ բաներ են, որ կարելի է ասել մսավաճառ մը անասնոց անդամները նոյնքան յաջողակութեամբ չէ կարող ջարդել։ Բիլրոթին փոխանակ վիրաբոյժ անունը տալու պէտք է մարդկային մարմինների դերձակ անուանել։ Ի պատիւ Բիլրոթի Վիէննա մնալու տուած խոստումին և ի նշան երախտագիտական համակրութեան, ոչ միայն բժշկական, այլ ընդհանուր գիտութեանց համալսարանների ուսանողները յունիս 22-ին գիշերը ժամի 10-ին կատարեցին մեծաշուք մի հանդէս որ Բիլրոթի նման մի մարդու արժան էր անել։ Երևակայեցէք 3000-ից աւելի ուսանողներ, ամենքը իրանց դասակարգին յատուկ զոյնզոյն համազգեստներով զգեստաւորված. գլուխնին փեղոյր և փետուրներով զարդարուած, իւրաքանչիւրը վառուած մեծ ջահեր ի ձեռին բռնած, զոյգ զոյգ գնում էին։ Առջևից հեծելազօր ոստիկաններ, ոստիկաններից յետոյ 100 հոգիէ բաղկացած նուագածուաց խումբ մը աւստրիական մարշը հնչեցնում էր։ Ուսանողների մէջ տեղից գնում էին սպիտակ շղաչատեռ և մետաքսեայ լայն ժապաւէններ կռնակից կուրծքերնին փաթաթուած համալսարանական դասատունները։

Հանդիսին առջևի ծայրը հասած էր ընդհանուր հիւանդանոցի առաջ որուն մօտ է Բիլրոթի տունը, իսկ միւս ծայրը քաղաքին վերջին արուարձանումն էր։ Հաւաքված էին մօտ կէս միլիոն ժողովուրդ։

Վայելչապանծ մի տեսարան էր ներկայացնում մանաւանդ բազմաթիւ ջահերի և զանազանների ծայրը անցրած լապտերների լոյսը։ Ջահակալ ուսանողների կարգի դրսից և երկու կողմից հրշէջ զինուորներ՝ ի միասին էին գնում, նմանապէս հանդէսին անցնելիք փողոցների անկիւններում ջրով լիքը մեծ տակառներ դրուած էին՝ ի նախազգուշութիւն հրդեհի, որովհետև Բինկ թատրոնի հրդեհը վիէննացւոց աչքը այնքան վախեցրեց, որ այժմ ոչ թէ վառուած ջահ, այլ կարմիր մի բան տեսնեն կրակ են կարծում։ Իրօք էլ մօտ 4 հազար ջահ և լապտերներ եթէ մի տեղում գումարուէին, դժոխքի մի կերպարանք կառնէին, արդէն Վիէննայի երկինքը հրդեհից աւելի կարմրած էր այնքան լոյսերի բազմութեամբ։ Ահագին ամբոխը խռնվեցաւ Բիլրոթի տան առջևը. այս արտաքոյ կարգի համակրական ցոյցը արքայավայել մի բան էր։ Բիլրոթը ջերմ շնորհակալութեան մի ատենախօսութիւն արաւ, որուն իւրաքանչիւր բառին հազարաւոր ձեռքեր ծափահարում էին կեցցէներով, ուրաներով սարսափելի գոռում և գոչումներով։

Ահաւասիկ արժանաւորութիւնը այսպէս գնահատել գիտեն լուսաւորեալ ազգեր։ Ո՞ գիտէ մեր մէջ որքան անյայտ Բիլրոթներ կան, որքան ինքնոյն տաղանդներ կան, բայց պէտք է քաջալերել, խրախուսել, ի բնէ ընդունակութիւն ունեցողները մշակել և ինքնուսների պակասները լրացնել տալու միջոցներ հայթայթել, հանճարների թիւը շատացնել և ազգը նրանցմով փառաց արժանացնել։

Այժմ ընթերցողը հասկացաւ վիրաբոյժ Բիլրոթին ինչ տեսակ վարպետ կարատող լինելը. ի բոլոր սրտէ կը բարեմաղթեմ որ ոչ ոք նրա ձեռքում կտրատվելու կամ կարկատվելու պէտք չը ղգայ, սակայն եթէ մեր ազգայինների մէջ գտնվեն մաքուր սիրտ չունեցողներ կամ իրանց սրտին մաքրութեանը վրա կասկածողներ, այնպիսիք մարդու բան չասելով կարող են Բիլրոթի մօտ գալ, սրտերնին բանալ, մաքրել տալ և կրկին տեղը դնել տալով, մաքուր խղճով վերադառնալ....

* * *

Մի մեծ մարդ ասած է թէ, աշխարհիս վրա ըստ մեծի մասին պատահած դժբաղդութեանց պարագայները եթէ քննադատուին, անտարակոյս սկզբնապատճառը կինը դուրս կը գայ։ Կարելի է միթէ ընդհանուր հայեցողութեամբ այսպէս վճիռ տալ։ Բայց երբեմն դէպքի բերմամբ և կամ նոյն իսկ վերոյիշեալ ենթադրութեան իրականութեամբ պատահում են այնպիսի դէպքեր, որոնց ծագման պատճառը կինն է ներկայանում։ Ահաւասիկ հետևեալ դէպքը կապացուցանէ։

Եգիպտոսի Աղէքսանդրիայում բնակող եւրոպացի մի տիկին, անուանի մի լրագրի թղթակցուհի, Եգիպտոսում մեծ դեր խաղացող Արաբի փաշային դէպ՝ ի խէդիվը և նորա ընտանեացը դէմ ունեցած ատելութեան սկզբնապատճառը հետևեալ կերպով է հաղորդում։

«Տաս տարի առաջ Արաբին հասարակ մի զինուորական էր։ Ազարակատէր գիւղացու մը աղջկանը վրա սիրահարվեցաւ, և շատ չուտով պիտի ամուսնանար մանկամարդ Ֆէլլահ աղջկան հետ, երբ նախկին խէդիվ Իսմայիլ բաշան զօրահանդիսի մը ներկայ գտնուած ժամանակը, տեսաւ Արաբիի նշանադրած աղջիկը, շատ հաւանեցաւ և ծնողացը հաւանութիւնը ստանալով աղջիկը իր հարէմն առաւ։ Արաբին կատաղած, յանդգնեցաւ ծանրալեզու մի նամակ գրել խէդիվին, առաջարկելով որ այդ մատղութիւնից ետ կենայ և աղջիկը իրան վերադարձնէ։ Իսմայիլ բաշան կարևորութիւն չը տուաւ այդ նամակին, բայց Արաբիին սիրտը շահելու համար նորա զինուորական աստիճանները հետզհետէ բարձրացուց։ Այսու հանդերձ Արաբին, ասում է թղթակցուհի տիկինը, կրած նախատինքը չը մոռացաւ, և երբէք չը ներեց խէդիվին, և այսօր Եգիպտոսում պատահած դէպքերին համար չէ կարելի ասել, որ Արաբի փաշայի ոխակալութեան մեքենայները չը լինեն։»

Կանայք գեղեցիկ սեռ են կոչվում, ճշմարիտ է. սեռը գեղեցիկ է, ասելիք չը կայ, մարդ հոգին կը տայ այդ սեռին, բայց տակն ու վրա է անում աշխարհը։

Մեր խեղճ նախահայր Ադամը ո՞ գիտէ ինչեր է քաշել գեղեցիկ սեռի նախամայր Եւայից, ասում են խաբել է Ադամին և խնձոր է կերցրել, բանից երևում է որ դա լոկ խնձորի խնդիր չէ, ո՞ գիտէ ուրիշ ինչ սատանայական բաներ է ուտեցրել։

* * *

Կրօսի բառարան (շարունակութիւն)

Ազգային ճառ։	Ցեռ։ Դատարկ տակառ։
Գրասէր Ատում։	Ծնրադրեցէք, արտասուեցէք, աղօթեցէք վասն բարձման խաւարին՝ ի Հայաստանէ և վասն լուսաւորութեան աղդիս, և ողորմա՛ք քո արարածոց և ինձ բազմամեղիս։
Ուսումնարան երկրագործութեան։	Հայր սուրբ, զքեզ ունիմ միջնորդ հաշտութեան։
Պատրիարքարանի զրագիր։	Ծոմի դիմացիր և մի մեռնիր։
Սեր։	Ուղածիդ չափ կեր։
Սէր։	Կեր, բայց զգոյշ լեր։
Նոր հարց հայկական։	Ցեռ։ Աշխարհարառ Աւեստարան։
Մկրտիչ կաթողիկոս, բարև։	Փախչիմ գնամ յիմ Կիլիկիա, աշխարհ որ ինձ եատուր արև։
Ամուսնութիւն։	Անգործածելի հին բառ։
Թէ իմ ալեոր հերքս սևնային։	Ներկավաճառները կը սնանկանային։
Բանաստեղծ։	«Անուն օրհնեալ կեանքը անիծեալ»
Պօլսեցի դերասան և ուհի։	Ցեռ։ Փոթի-Թիֆլիս երկաթուղի։
Անի։	Պօլսեցին այն տեղ գործ չունի։

Կրօ

Ներքին տեսութիւն

Ազգային ճառ։ Գրասէր Ատում։ Ուսումնարան երկրագործութեան։ Պատրիարքարանի զրագիր։ Սեր։ Սէր։ Նոր հարց հայկական։ Մկրտիչ կաթողիկոս, բարև։ Ամուսնութիւն։ Թէ իմ ալեոր հերքս սևնային։ Բանաստեղծ։ Պօլսեցի դերասան և ուհի։ Անի։

Ցեռ։ Դատարկ տակառ։ Ծնրադրեցէք, արտասուեցէք, աղօթեցէք վասն բարձման խաւարին՝ ի Հայաստանէ և վասն լուսաւորութեան աղդիս, և ողորմա՛ք քո արարածոց և ինձ բազմամեղիս։ Հայր սուրբ, զքեզ ունիմ միջնորդ հաշտութեան։ Ծոմի դիմացիր և մի մեռնիր։ Ուղածիդ չափ կեր։ Կեր, բայց զգոյշ լեր։ Ցեռ։ Աշխարհարառ Աւեստարան։ Փախչիմ գնամ յիմ Կիլիկիա, աշխարհ որ ինձ եատուր արև։ Անգործածելի հին բառ։ Ներկավաճառները կը սնանկանային։ «Անուն օրհնեալ կեանքը անիծեալ» Ցեռ։ Փոթի-Թիֆլիս երկաթուղի։ Պօլսեցին այն տեղ գործ չունի։

Կրօ

պիսի մի սենեակի մէջ նստած են 60—70 աշակերտներ....:

Օդը՝ այդ դասատան մէջ անտանելի ծանր է, պատուհաններ բացանելը ոչ միայն անօգուտ, այլ աւելի ևս վնասակար է, որովհետև դասատան դիմացի աւերակ տեղը աղբանոց է շինված, որի մօտից անցկենալիս անպատճառ պէտք է քիթը բռնել...:

Նշմարելի է որ այդ աղբանոցը գտնվում է քաղաքի կենտրօնում, նոյն իսկ պ. վաւառապետի տան ետևը և գտնվում է թէ հայոց—ինչպէս յիշեցի—մի դասատան և թէ արքունական աղջ ուսումնարանի դիմացը:

Ցուրտ, ծուխ, թոզ, այդ բոլորը մեր ուսումնարանների անբաժան պարագաներն են եղել:

Զը նայելով որ արդէն 11-երրորդ տարին է ինչ հիմնվել է տեղւոյս սուրբ Սանդիտեան օրիորդական ուսումնարանը, բայց դա էլ դեռ ևս սեփական տուն չունի, այլ տեղաւորված է մի վարձված տասնաւոր անյարմարութիւններով լիքը ընակարանի մէջ: Մի խօսքով այն ինչ ուրիշ տեղերում ուսումնարանների գործերը հետզհետէ առաջ են տանում, մեր ուսումնարանների գործերը վատթարանում են: Մեր ուսումնարաններից արական ուսումնարանը ունի չորս դասատուն (ստորին, միջին և բարձր պատրաստականներ և առաջին դասատուն), իսկ իգականը՝ երեք դասատուն (ստորին պատրաստական, բարձր պատրաստականի ստորին և բարձր բաժանմունք և առաջին դասատուն), որոնց առաջինում գտնվում են 160-ի չափ աշակերտներ, իսկ երկրորդում 70 աշակերտուհիներ:

Ցաւօք սրտի յայտնում եմ, որ մեր երկսեռ ուսումնարանների առաջին դասատունները, նիւթական միջոցի սղութեան պատճառով եկող ուսումնական տարուց կը փակվեն: Սորանից երկու տարի առաջ ուսումնարանը տարեկան 5,000 ր. էր ծախսում, անցեալ տարի ծախսեց 4,000 ր., իսկ եկող տարվայ համար նախահաշիւ է կազմված միայն 3,000 ռուբլի:

Անցնող 1881/82 ուսումն. տարվայ համար դեռ ուսուցիչները ստանալու ունեն 1,000 ռուբլի: Վերջիններս ամբողջ տարին մեծ նեղութիւն են կրել ռոճիկները ստանալու, ամբողջ 4—5 ամիսներով ոչինչ չեն ստացել, բայց և այնպէս ուրիշ տեղերի ուսուցիչների պէս աղմուկներ չեն յարուցել լրագրութեան մէջ:

Դժբաղդաբար մեր մէջ ուսուցիչները առհասարակ նիւթապէս անապահով մարդիկ են և այդ պատճառով մեծ զրկանքներ յանձն պէտք է առնէ մի ուսուցիչ ամբողջ ամիսներ առանց ռոճիկ ստանալու «հօլայ» գնալով: Թող ներեն ինձ մեր պ. պ. հոգաբարձուները եթէ ասեմ, որ փող եղած միջոցին էլ նոքա շատ հոգ չեն տարել ուսուցիչների ռոճիկները իր ժամանակին վճարելու (մեր ուսուցիչների և ոչ մեր նախորդների վրա է խօսքս): Հոգաբարձութիւնը ներկայացրել է իր հրաժարականը թեմ. տեսչի օգնական արժ. Խ. ա. ք. Բարոզեանին: Առ այժմ այսքան. մի այլ անգամ գուցէ աւելի մանրամասն գրեմ, որովհետև նիւթեր կան գրելու ուսումնարանների վերաբերութեամբ:

* * *

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Լսում ենք որ մի քանի ուսուցիչներ, մանաւանդ Ղարաբաղից եկածները, յայտնել են որ չեն կարող սպասել մինչև օգոստոս ամիսը ընդհանուր հայոց ուսուցչական ժողովին ներկայ գտնվելու համար, քանի որ օգոստոս ամսին լինում է աշակերտների ընդունելութիւնը Ղարաբաղի զրպարտցներում: Այդպիսով ժողովի սկսվելուն չը սպասելով այդ մի քանի վարժապետները յետ են դառնում իրանց երկիրը: Նրանց կարծիքով լաւ կը լինէր եթէ ժողովը կայանար յուլիս ամսին:

—

Մեզ գրում են ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ: «Երկու տխուր անցքեր պատահեցան այս օրերս մեր կողմերում: Քաղաքիս մօտի ձորից փայտ բերող մի գիւղացի սայլով բարձրանալիս, սայլը շուռ է եկել և գիւղացին տակը մնալով, ճնշվել, սպանվել է: Մի քանի օրից յետոյ քսան և չորս տարեկան մի երիտասարդ թափարավան-չայ գետում խեղդվեց:»

—

Շնորհակալութեամբ ստացանք Վիեննայից մեր մի բարեկամից, անձնասպան օրիորդ Մարի Դալմօնի պատկերը: Ինչպէս երևում է այդ անձնասպանութիւնը այնքան աղմուկ է հանել Վիեննայում որ օրիորդի պատկերը մեծ քանակութեամբ ծախվում է այժմ Վիեննայում: Պատկերին նայելով հանգուցեալը պէտք է ճշմարիտ մի հրաշալի գեղեցկուհի եղած լիներ:

—

Մեզ գրում են ԵՐԵՒԱՆԻՑ հետևեալը: «Երեւանեան նահանգի թէֆթարակ գիւղից մօտ 15 տուն խնդիրք են տալիս Ղրիմ և Մալօրօսիա գաղթելու: Այդ գաղթականութիւնը, եթէ աջողվի, վատ հետևանք կունենայ, օրինակ դառնալով և միւս գիւղացիներին: Ինչ է անում Էջմիածինը:»

—

Կիրակի, յունիսի 27-ին հայ դերասանական խումբը Արծրունու թատրօնում կը տայ մի ներկայացումն յօգուտ պ. Տէր-Գրիգորեանի: Ներկայացումը կազմված է երեք բաժիններից: Տեղերի գները սովորական են:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ՀԱՐՑ

—

Անգլիական զօրքերի եգիպտական ափերի վրա իջնելու մասին Լօնդօնի մամուլը խօսում է ինչպէս մի վճռած գործի մասին, գրում է „Голосъ“: „Բէյտերի ընկերութիւնը“ Սիմլայից ստացված մի լուր հրատարակեց, որ Հնդկական կառավարութեանը հրամայած է Հնդկաստանի մէջ գտնվող զօրքերի մի մասը պատրաստել Եգիպտոս ուղևորվելու համար: „Times“ լրագիրը մինչև անգամ որոշում է այդ զօրքերի թիւը, ասելով, թէ Անգլիան ամենակարճ ժամանակամիջոցում կարող է 20,000 զօրք հասցնել Եգիպտոս: Յիշեալ լրագիրը մինչև անգամ չէ էլ ծածկում այն հանգամանքները, որոնց ժամանակ անգլիական զօրքերի Եգիպտական ափերի մօտ իջնելը անհրաժեշտ կը լինի: Ինչպէս և առաջ Անգլիան ձգտում է Եգիպտական հարցի հիմնաւոր լուծմանը Եւրօպական պետութիւնների օգնութեամբ: Բայց եթէ կոնֆերենցիան անկարող կը լինի այդպէս լուծել հարցը, այն ժամանակ Անգլիան ինքը կը պաշտպանի իր շահերը: Լրագիրը չէ ծածկում և այն, թէ ինչ ճանապարհով կը պաշտպանվեն յիշեալ շահերը: Լրագրի կարծիքով, Անգլիան թոյլ չի տայ, որ Արաբի-փաշա իր ցանկութեան համեմատ կարգադրէ Եգիպտական գործերը: Մինչև որ այդ ապատամբը իշխանութիւնից չը զրկվի, Անգլիան իրան բաւականացած չի համարի:

Որ Եւրօպական կոնֆերենցիան անկարող կը լինի պաշտօնանկ անել Արաբի-փաշային, դա հասկանալի է այն ընծայից յետոյ, որ սուլթանը ուղարկեց Եգիպտական պատերազմական մինիստրին և այն համաձայնութենից յետոյ, որ կայացել է Արաբի-փաշայի և սուլթանի հաւատարմատար Դերվիշ-փաշայի մէջ: Եթէ Կ. Պոլսի մէջ հաւաքված քաղաքագէտները մինչև անգամ կը պահանջեն սուլթանից Արաբի-փաշային պաշտօնանկ անել, ինչ նշանակութիւն կարող է ունենալ այդ պահանջը Բ. Դրան համար, որ եռանդով ապացուցանում է ոչ թէ միայն կոնֆերենցիայի ապարդիւն լինելը, այլ և նրա վնասակարութիւնը: Թիւրքաց կառավարութիւնը Եւրօպայի ներկայացուցիչներին կամ ուղղակի կը բացասէ, կամ կը պատասխանէ, թէ նա անկարող է ստիպել խեդիվին պաշտօնանկ անել մի մինիստրի, որի ներկայութիւնը խեդիվը անհրաժեշտ է համարում: Այդ պատասխանից յետոյ նպատակին հասնելու համար ուրիշ միջոցներ չեն մնում, եթէ ոչ նրանք, որոնց գործադրելու համար Անգլիան այժմեանից պատրաստվում է:

Ճշմարիտ է, այդ միջոցները սուլթանի բարձր իրաւունքների հակառակ կարող են համարվել և այդ իրաւունքներն էլ պաշտպանում են Աւստրօ-Ունգարիա, Գերմանիա և Ռուսաստան, բայց, եթէ կը յայտնվի, որ Բ. Դուռը չէ կամենում հետևել կոնֆերենցիայի բարի խորհուրդներին, յիշեալ պետութիւնները հաւիւ թէ կարելի կը համարեն պաշտպանել Թիւրքիային Անգլիայի դէմ, այլ ընդհակառակը կը հոգան որ անգլիական միջամտութիւնը միայնակ չը լինի: Անգլիայի զօրքերի Եգիպտոս գնալը առիթ կը տայ Եգիպտոսի միջազգային գրաւմանը: Այսպէս թէ այնպէս այդ գործը անհրաժեշտ կը լինի, եթէ կոնֆերենցիային չի աջողվի պաշտօնանկ անել Արաբի-փաշային:

Հասկանալի է, որ պետութիւնները չեն կամենում հասնել այդպիսի հետևանքների և ներկայումս բոլոր ջանքերը գործ են դնում, որ ստիպեն Բ. Դրանը փոփոխել իր յարաբերութիւնները կոնֆերենցիայի հետ և մինչև անգամ մասնակցել նրա նիստերին: Լուր է տարածված, որ այդ ուղղութեամբ մեծ եռանդով գործում է գերմանական կառավարութիւնը, որ շատ լաւ հասկանում է, թէ իր բարոյական պաշտպանութիւնը Բ. Դրանը բոլորովին անկարող է ստիպել Անգլիային հրաժարվել Եգիպտոսը և Սուէզի ջրանցքը գրաւելուց: Թիւրքաց կառավարութիւնը շատ լաւ կանէր, եթէ հետևէր Բերլինից ստացված խորհուրդներին, բայց դժուար է դրան հաւատալ:

Վերև ասվածների հիման վրա եգիպտական գործերը այնպիսի ընթացք են ստանում, որ մեծ ուշադրութեան արժանի են: Հեռու չէ այն րոպէն, երբ Եւրօպան երկուսից մէկը պէտք է ընտրէ՝ կամ համաձայնութեամբ գործել Անգլիայի ընտրած նախագծի համեմատ, կամ միջազգային ամենանշանաւոր անբաւականութեան և մաքառման հանդիպել: Վերջինը այնքան վտանգաւոր է, որ նրանից կը զգուշանան մինչև անգամ այն պետութիւնները, որոնք ամենից շատ տրամադրված են պաշտպանել սուլթանի բարձրագոյն իրաւունքները Եգիպտոսի վրա:

ՆԱՄԱԿ ԱՒՍՏՐԻԱՅԻՑ

—

Վիեննա, 28 յունիսի

Վիեննայի մօտ, Դանուբի ձախ եզերքի վրայ Օտաբնշայմ անուն գիւղին մէջ սրատաշող և աղէկտուր մի դրամատեղի ունեցաւ որուն համար ամբողջ տեղական թերթերը մեծ ցաւ և կսկիծ յայտնեցին, նմանապէս հասարակութիւնը յանչափս տրամեցաւ:

Ֆրանսիայում, կարելի է ասել, այս տեսակ դէպքեր, մանաւանդ անձնասպանութիւններ սովորական և երկրորդական բաներ են դարձած. մարդ եթէ ցանկանայ գլխի մաղերին տնկվիլը, բաւական է ֆրանսիական թերթերում խառն լուրերի սիւնակները կարդայ, ջերմի հիւանդութիւնից բռնուածի նման կը սկսի դողդողալ: Բայց մեր պատմելիքը անկարելի է որ ընթերցողին կարեկցութիւն և վշտակցութիւն չը պատճառէ, ոչ թէ Ֆրանսիայում, այլ մինչ ցարդ և ոչ մի տեղում այսպիսի ցաւագին դէպք չէ լսուած:

Երկու մանկամարդ ֆրանսիացի օրիորդներ, Մարի Դալմօն 20 տարեկան, և Ամէ Բէնվիլ փոքր ինչ աւելի տարիքով, և առաջնոյն անբաժանելի բարեկամուհին, երկուքը ի միասին Վիեննայից յիշեալ Օտաբնշայմ գիւղը գնալով Գուտընհօվի կոմսին պարտէզին մէջ անձնասպանութեամբ կարեցին իրանց ամենաթարմ կեանքի թելերը: Երկու օրիորդները հաստատ որոշումով իւրաքանչիւրը իր սրտին բևեռելի մի հարուած տալով սպանուեցան: Դիակների դէմքի վրայ ոչ ցաւի նշոյլ կար և ոչ կսկծի հետք. սրանից երևում է որ հարուածները ճիշդ նպատակատեղին ուղղել են և հետևաբար մահը վայրկենական է եղել:

Օրիորդ Մարի Դալմօնը փարիզցի մի դերասանուհոյ աղջիկ է, Վիեննա եկած էր երգեցողութիւն ուսումնասիրելու համար, իր բարեկամուհի օրիորդ Բէնվիլն էլ հետը ընկերակցած էր:

Ֆրանսիական դեսպանատունը ընդունուեցան երկու օրիորդները, ուրտեղ ծանօթացան զինուորական ատաշեանաւոր պ. կոմս Գուտընհօվին: Առանց ուշանալու մտերմական յարաբերութիւնները սկսան ընդ մէջ պ. կոմսի և օրիորդ Մարի Դալմօնի որ խարտեշահեր գեղեցիկ մի աղջիկ էր: Այս մտերիմ յարաբերութեան հետևանք եղաւ կայտառ մի մանչ երեխայի ծնունդը, խեղճ մանուկը արդէն ապագայ չունենալու դատապարտուած էր, որովհետև օրիորդին և կոմսին մէջ մեծ անհաւասարութիւն կար ամուսնութեան մասին. ուստի դժբախտ աղջկան սև ճակատագիրը յայտնվեցաւ այն րոպէից, յորում պ. կոմսը սառը կերպով նայելու սկսեց դէպի իր սիրուհին մայր օրիորդ Դալմօնը:

Օրիորդ Դալմօնը գեղեցիկ և քաղցրանուագ ձայն և երկար տարիներ երգանկութիւն վայելելու մեծ յոյսեր և տրամադրութիւններ ունէր:

Արիստօկրատ կոմսին սառնութիւնը, իբր բարոյականի տեղ բռնող նիւթական հատուցում ընդունել տալու համար օրիորդին արած առաջարկութիւնը, և այս վերջինին մերժումը, միութեան անկարելիութիւնը, սոցա ամենքը արդէն օրիորդին զրգռած պատուասիրութեան վրայ ծանրաբեռնելով, իր կեանքին վերջ տալու անդառնալի որոշումից զատ ուրիշ փրկարար մխիթարութիւն չէր գտած:

Բայց ինչ կասէք իր բարեկամուհի օրիորդ Բէնվիլին. սա վիպասանութեան մէջ բնաւ գործ չունէր, միայն պարզապէս լոկ մի բարեկամուհի էր, սա ինչ տեսակ բարեկամութիւն, ինչ տարօրինակ անձնուրացութիւն է որ մինչ ի մահ ուզեցել է իր դժբախտ ընկերուհւոյն ընկերանալ:

Ոչ մի վիպասան, և ոչ մի թատերահիւս չէ համարձակված երևակայելու մի անձնասպանութիւն որ գործուի լոկ բարեկամական անձնուրութեամբ: Անթափանցելի գաղտնիք!

Անձնասպան օրիորդ Մարի Դալմօն այնքան գրաւած էր հասարակութեան համակրութիւնը, որ նրա լուսանկար պատկերները մեծ քանակութեամբ ծախվում են այժմ:

* * *

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Times» լրագիրը նկատում է, որ եթէ Բ. Դուռը Եւրօպայի համար բաւականացուցիչ պայմաններով կը գործի Եգիպտոսում, դրանից աւելի լաւը ցանկանալ չէ կարելի. հակառակ դէպքում անհրաժեշտ կը լինեն այլ միջոցներ, և այն ժամանակ Անգլիան ամբողջ աշխարհի առաջ ցոյց կը տայ, որ պատրաստ է պաշտպանել իր պատիւը և շահերը: «Times» լրագիրը կարծում է, որ կառավարութիւնը, վերջապէս, վճռեց իրական միջոցների դիմել վերջնականապէս կանոնաւորելու համար եգիպտական հարցը:

—«Standard» լրագրի Կայրէի թղթակիցը յունիսի 11-ին տեսակցեցաւ Արաբի-փաշայի հետ: Նրա խօսքերով, փաշան յաղթող դիրքատօրի դրութիւն ունի. նա մեղադրում է անգլիական գործակատարներին այն բանի մէջ, որ նրանք մոլորեցնում էին իրանց կառավարութիւնը սխալ տեղեկութիւններ հաղորդելով գործերի իսկական դրութեան մասին, և մի և նոյն ժամանակ նախազգուշացնում է Անգլիային, որ եգիպտացիներին այնպէս հեշտ չէ կարելի յաղթել, ինչպէս աֆղանցիներին, զուլուսներին և աշանտիներին: Արաբի-փաշան աւելացրեց, որ ինքն ամեն միջոցներով կընդդիմադրէ և որ համաձայնութիւնը միայն այն դէպքում հնարաւոր կը լինի, երբ օտար նաւերը կը հեռանան եգիպտական ափերից: Ալէքսանդրիայի պահապան զօրքը ներկայ րոպէում բաղկացած է տասն հազար մարդուց:

—Բերլինի «Post» լրագրին Լօնդօնից հեռագրում են, յունիսի 26-ից, որ անցեալ շաբաթ «Times» լրագրի խմբագրութեան մէջ մէկ նամակ ստացվեցաւ, երևի ֆենիաներից ուղարկված, որի մէջ սպառնում են լրագրի տպարանի վրա յարձակվելու զիտաւորութեամբ: Այդ ժամանակից խմբագրատունը գիշեր և ցերեկ պահպանում են զինուորված պահապաններ:

—Գերմանական լրագրները հաղորդում են, որ յունիսի 25-ին առաւօտեան, Բերլինում բացվեցաւ 600—700 մարդուց բաղկացած մէկ ժողով, որի նպատակն էր քննել բէյլիստաղին մատուցանելի բանաւորների խնդրագիրը աշխատելու օրը ո-

րոշելու համար, բայց պոլիցիան փակեց այդ ժողովը սոցիալիստների մասին հրատարակված օրէնքի հիման վրա: Այդ ժողովում որմնադիր Կոնրադ ասատիկ խիստ ճառ խօսեց կառավարութեան դէմ:

—Բաղմաթիւ յարգելի անձինքների մէջ, որոնց թւում պէտք է յիշել կէնտրբերեան և իրլեան արքեպիսկոպոսներին, միտք ծագեց արժանաւոր արձան կանգնեցնել ի պատիւ մեծ բնագէտ Դարվինի: Մատրութիւն կայ Լօնդոնի հրապարակներից մէկի վրա կանգնեցնել Դարվինի արձանը և մայր գումար հաւաքել բիոլոգիայի աջողութիւններին նպաստելու համար:

—Լրագիրները հաղորդում են, որ հռօմէական կօլէգիումի մեծ դահլիճում յունիսի 25-ին կատարվում էր հանդիսաւոր ժողով հանգուցեալ Զարլզ Դարվինի յիշատակը պատուելու համար: Ներկայ եղողների թւում կային սենատի նախագահ սինիոր Տէկկիո, սենատի և պատգամաւորների ժողովի շատ անդամներ, վերջինների թւում սինիոր Մինղէտտի, բաղմաթիւ պրոֆէսորներ և գիտնականներ: Արտաքին գործերի մինիստր Մանչինի և նրա ընկերները չը կարողացան ներկայ գտնվել և նամակներ ուղարկեցին: Պրոֆէսոր Մոլեշոտտ ճառ կարդաց ի պատիւ հանգուցեալ բնագէտի, որի մէջ նրա կեանքը և նրա վարդապետութիւնը նկարագրեց: Հռետորը նկատեց, որ Իտալիայի պատմութիւնը ներկայացնում է դարվինական գոյութեան կռիւ թէօրիայի մէկ պատկեր, որովհետև Իտալիային աջողվեցաւ յաղթել օտար եկեղեցիներին և թէոկրատիական իշխանութեանը, և նա այժմ գտնվում է ազիտութեան դէմ յաղթութեան ճանապարհի վրա: Պրոֆէսորը վերջացրեց ճառը հետևեալ խօսքերով. «Դարվին վախճանվեցաւ... Շատ տարիներ Դարվինին:» Նրա ճառը մեծ ծափահարութիւններով ընդունվեցաւ, և հանդէսի վերջանալուց յետոյ, ամբողջ կօրպօրացիայի ուսանողները ճանապարհ դրին պրոֆէսորին մինչև իր կառքը:

—Յունիսի 25-ին, Ֆլորէնցիայում բացվեցաւ Սավանարոլլի արձանը: Շատ ճառեր խօսվեցան, որոնց թւում և պրոֆէսոր Վիլարի, որը մեծ բէֆորմատորի կենսագրութեան դրողն է:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզի բիոլոգիական ընկերութիւնը այս օրերս գիտական ճշդութեամբ որոշեց, թէ ինչ կը նշանակի մինչև անդայութիւն հարբած լինել: Այդպիսի դրութեան մէջ մարդս այն ժամանակ է լինում, երբ մարդկային օրգանիզմում արեան 195 մասնիկների վրա գալիս է ալկոհոլի մէկ մասնիկ: Արբեցողների մեծ մասը, այդպիսի դրութեան հասնելով, դադարում են խմել, թէ չէ ալկոհոլով թունաւորվելը աւելի յաճախ կը պատահէր: Եթէ արեան հարիւր մասնիկների վրա ալկոհոլի մէկ մասնիկ է գալի, այն ժամանակ մահը անփախչելի է:

* * *

Որ համը չէ կարելի իմանալ առանց հոտառութեան, դրա մէջ ամէն մարդ կարող է համոզվել, քիթը ամուր կերպով փակելով: Ընտանեկան փորձից յայտնի է, որ շատ զզուելի դեղեր կարելի է այդ ձևով ընդունել: Կարդինալ Ալբերոնի այնպիսի նուրբ հոտառութիւն ունէր, որ ծերութեան ժամանակ, երբ արդէն կուրացած էր, նա միայն հոտով էր զանազանում երիտասարդ կնոջը պառաւից: Ռուսսօն այնքան նուրբ հոտառութիւն ունէր, որ, նրա խօսքերով, «կարող էր նկարագրել ամէն ծաղիկների հոտը», եթէ լեզուն այնքան խօսքեր ունենար, որքան զանազան հոտեր կան աշխարհիս վրա: Յայտնի փիլիսոփայ Կանտ չէր կարողանում տանել աղքատ ուսանողների ներկայութիւնը աուդիտորիայում, այն հիման վրա, որ վատ կերակրվող մարդկանց չնչառութիւնը նրա համար անտանելի էր. միայն սև հացով կերակրվող մարդկանց նա «անպիտան մարդիկ» էր անուանում: Նապոլէօն 1-ի հոտառութիւնը այնքան նուրբ էր, որ ս. Հեղինէի կղզին աքսորելու ժամանակ, նա հիւանդացաւ նաւային կպրի հոտից: Թարմ ձիթանրկի հոտի վախից, նա գերադասեց մնալ աքսորական իր հին տան մէջ և չէր անցնում նոր, յարմարաւոր շինած տանը: Վերջապէս Սպանիական Փիլիպպոս II թագաւորը բոլորովին զրկված էր հոտառութեան զգացմունքից:

* * *

Երկարակեցութիւնը հին ժամանակ ներում: «Journal des Débats» լրագիրը յիշում է, որ, ըստ Լուցիանի, յունաց եօթն իմաստուններից չորսը—Սոլոն, Ֆալէս, Պիտտակ և Էպիմենիդ—ապրեցին իւրաքանչիւրը հարիւր տարուց աւելի: Մինչև անգամ Պլինիոս հաղորդում է, որ Էպիմենիդ մեռաւ 145 տարեկան հասակում: Վալերի Մակսիմ հաստատում է, որ Սոֆոկլը իր «Էդիպ» գրեց հարիւր տարեկան հասակում: Երգիծաբանական բանաստեղծ Դէմոկրիտ մեռաւ 109 տարեկան, հռետոր Իզոկրատ—99 տարեկան, ողբերգական բանաստեղծ Արիստարխ—100 տարեկան, թէոֆրաստ փիլիսոփան—107 տարեկան, Հիպպոկրատը—99. մի և նոյն տարիքին հասաւ և մեծ հռչակաւոր բժիշկը—Գալիէ: Հռօմայեցիներից մինչև 100 տարեկան հասակը ապրեց Իվենալ, Ցերենցի Վարրոն—մինչև 98 տարին, Կվինտ Ֆաբի Մակսիմ մինչև 100 և Պերինի Տիտ մինչև 111 տարին:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 յունիսի: „Голосъ“ լրագրի համարների հատով ծախելը արգելված է: Ֆեդէվի դանդատի համեմատ նրա պատիժը թեթևացրած է, վեց ամիս նրան ծառայութենից զրկելով: Բուշի դանդատը առանց հետևանքի է թողված: Դրիմի մէջ հաղորդենիները քննելուց աջող հետևանքներ ստացվեցան: Ցոյս ունեն, որ վարակված 23 դեսեատինը ոչնչացնելուց յետոյ, ֆիլոկսերան էլ կոչնչանայ: Ասում են, որ Մեչնիկովին կառաջարկվի բնագիտութեան ամբիոնը գիտութիւնների ակադեմիայի մէջ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 յունիսի: Պետական բանկի 5% տոմակը առաջին շրջանի արժէ 93 ր. 87½ կ., երկրորդ 90 ր. 50 կ., երրորդ 90 ր. 62½ կ., չորրորդ 90 ր. 37½ կ., հինգերորդ 90 ր. 12 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմակը արժէ 218 ր. 25 կ., երկրորդ 210 ր. 50 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմակը արժէ 89 ր. 25 կ., երկրորդ 88 ր. 87½ կ., երրորդ 89 ր. 12 կ., Ռուսաց 1 ր. Լօնդոնի վրա արժէ 24 պէնս, ռուսաց 100 ր. Փարիզի վրա արժէ 252 ֆրանկ: Բօրսայի տրամադրութիւնը հանդիստ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՈՆ

ԿԻՐԱԿԻ, յունիսի 27-ին **ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆԱԿԱՆ ԽՈՒՄԲԸ** կը տայ մի ներկայացում յօգուտ պ. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆԻ: Տեղերի գները սովորական են:

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

ԺՕՐԺ ՍԱՆԴ'Ի

„ՎԱՐԴԱԳՈՅՆ ԱՄՊ“

Մանկական վէպը:

Ծախվում է 'ի նպաստ մի չքաւոր աշակերտի կենտրոնական և կովկասեան դրախանութներում:

ԳԻՆՆ Է 25 Կ.:

ՍՏԱՑՎԱԾ Է գրելու թուղթ առաջին տեսակի 4 ր. 50 կ. օզման, բրինձ 6, 8 և 9 կ. ֆունտը, խինայի գինի ՀԵրմի դէմ 1 ր. 40 կ. շիշը, փոշի տարափոխիկ հիւանդութեան դէմ, լուացքի և սամվար սրբելու համար: **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԷՅ**: Նոյն տեղը լէպէշկաներ, ցիտրադ և շերբեթ ծարաւի դէմ: Դաճկոցներ 4 ր., շօկոլադ երկու բաժակի համար 5 կոպէկ: Երկաթէ մահճակալներ 8 ր. և այլն: 7—10

ՄԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂ, որ այժմ արդէն Մանգլիսումն է ապրում, յանձն է առնում պարապել երեխաների հետ՝ թէ արքունական և թէ հայոց ուսումնարանների աշակերտների և աշակերտուհիների հետ:

Պայմանները կարելի է առաջարկել հետևեալ հասցէով. Манглисъ, Габріэль Мирзоевъ, въ рощѣ, дача Марѳы Тимоѳѣевой.

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

БРОШЮРА

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ, Գօլովինսկի պրոսպեկտի վրա, տուն Ճարտարապետ Բէլօի: Գրասենեակը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3 ժամը կէս օրից յետոյ և երեկոյեան 7—10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրերից և մեծ տօներից:

„ԿՐԿՆԱԿԻ ԻՏԱԼԱԿԱՆ ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ“ ԱՆՈՒՆՈՎ ԳՐՔՈՅԿԻ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ.

Խնդրում ենք այն անձինքներից թէ բաղու և թէ այլ քաղաքներ, որոնց մօտ գտանվում են այդ գրքոյկի բաժանորդական թերթեր մինչև յունիսի 20-ը մեզ հասցնել.

Թերթերը պիտի ուղարկուին ուղղակի իմ հասցէին. Баку. „Россійскій магазинъ„ Абелу Апресянцу. Մինչև յուլիսի վերջը մեզ ուղարկուած բաժանորդական թերթերի մասին մի երկրորդ նամակաւ մեզ տեղեկութիւն տալ խնդրում ենք ուղարկող պարոններից, երկու թերթ մեջտեղում պակաս լինելուն առթիւ:

Բաժանորդներին յանձնելի գրքերը արդէն տպագրութեան տակ են Թիֆլիսում:

Հրատարակիչ.—Աբել Ապրեսեանց.

Միջի փողոց, կաթոլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԵՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱԹՆԵՐ 8—30 ր., չամադաններ 250—25 ր., սակվոյաժներ 1. 30—12 ր., սուն դուկներ ճանապարհի 6—35 ր., մարտներ (погребцы) 6—25 ր., սամովարներ 60 կ.—1.25 ֆունտը., կուլիսների պղնձէ ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ուսմի վալնիկներ մրամօրնի 38 ր.—75 ր., հրացաններ երկու լուլանի 6—32 ր., ռէվոլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատրոնները. (գուլաններ) ըէվոլվէրի, սիգար Ռինգարդի ֆաբրիկից. պապիրոս և թամբաքու կուշնարովի գիլզի պապիրոզի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԷՑ (չայ) ԵՂ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) էլինէմի. կոֆէ էլինէմի և Միխէլսոնի. պետերբուրգու 40—1 ր. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պրոբկայ գինեվաճառների, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) դուլթուկ (пухъ), պաղնոսներ սամովարի և չայու, դանակ չանգալ զանազան ֆաբրիկաների 1 ր. 20 կ.—25 ր. դուժինը. գրչակոթներ 1 ր. 80 կ.—5—60 կ. դանակ ջիբի 1—60 կ.—12 ր., դանակ հացի 20 կ.—1 ր., հատը, կուխոնների 1—40 մինչև 3—20 կ. պրիբոր. միս կտրելու մաշինայ. Անգլիական ութոներ, Բրիտանսկի չայնիկներ, կաֆէնիկներ ամենայն տեսակ, ջաղացներ կաֆէի համար, ֆիլտեր—ջուր մաքրելու, կրակմալ կարօրկէն 18 կ., վաքս ֆրանսիայի ծակոյ, թուղթ փոշտի, կանվերտներ, սուրգուչ, մատիտ, գրիչ երկաթէ, գրչակոթ, քարետախտակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիեներ, գդալներ սեղանի և չայու ֆրաժէ, վարշավի և բրիտանսկի դուժինը 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ.—5 ր., չուտիչկէք 45 կ.—5 ր., շամադաններ ամեն տեսակ 25 կ.—12 ր. ջուխտ, պոլսապոշկաններ վարշավու, ՌԵԶԻՆԻ ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլբանները կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. ջուխտ, շապիկներ, մարդկերանց գալուստիկներ, գոնտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրևի և շոքի. սանդրեր շիրմայու ոսկորէ, գուտապերչովի և փայտէ, շչոտկաներ գլխի, շորի, սապոնի, պոլի և կարտի համար. չուլքի թէլ (бумага) մատոկի կօճի և շալէ (гарусъ) ֆելչատկէք մարդկերանց և կանանց, պորտմաններ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մանր գոլանտերեյնի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.,—30 կ., կաոր, հոտավէտ ջրեր, պուդրա, գլիցերին ջրի քացախ, հոտավէտ պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱԲՕՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն:

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՐԱՑԵԼ ՏԷՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ պահեստում (въ складѣ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցէով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

80—180

Միջի փողոց, կաթոլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

JOURNAL D'ORIENT

HEBDOMADAIRE

Paraissant a VIENNE (Autriche)

ABONNEMENTS: 1 an. . . 8 roubles
6 mois. . . 4 —

S'adresser à F. Salles, avocat
1. Neuermarkt 9. (Vienne)

Sans ajouter le titre du journal.

Дозволено цензурою, Тифлисъ, 25 Іюня 1882 года.

Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час. Лор.-Мелик. ул., каз. д.